

Ակցիան գործում է 2021թ. հուլիսի 1-ից մինչև սեպտեմբերի 30-ը ներառյալ

Ակցիայի (այսուհետ՝ Ակցիա) շրջանակներում «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն (այսուհետ նաև Բանկ) իր որոշակի խմբի հաճախորդներին այլ ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի տեղափոխման նպատակով ֆինանսավորումները կիրականացնի հետևյալ պայմաններով.

Որպես հայտատու կարող են հանդես գալ	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում առնվազն 3 ամիս գործող			
	<ul style="list-style-type: none">- հիփոթեքային (անշարժ գույքի ձեռքբերում, վերանորոգում, կառուցապատում) վարկ ունեցող,- անշարժ ու շարժական գույքի գրավով ապահովված վարկ ունեցող,- հաշվարկային քարտ ունեցող			
հաճախորդները, ովքեր հայտի դիտարկման պահին ունեն այլ ֆինանսական կազմակերպության կողմից մինչև 01.06.2021թ.-ը տրամադրված գործող ֆինանսավորում:				
Այլ ֆինանսական կազմակերպությունում տրամադրված վարկատեսակ		Տեղափոխման վարկատեսակ	նպատակով	Բանկում տրամադրվող
1.	Բնակելի անշարժ գույքի ձեռքբերման վարկ	«ՆՈՐԱՄՈՒՏ» բնակելի անշարժ գույքի կամ հողատարածքի ձեռքբերման վարկ		
	Անշարժ գույքի կառուցապատման վարկ	«ՄՈԴԵՐՆ» անշարժ գույքի վերանորոգման վարկ		
	Անշարժ գույքի վերանորոգման վարկ	«ՆՈՐՈՒՅԹ» կառուցապատման վարկ		
2.	Անշարժ գույքի գրավադրմամբ վարկ	«ՆԵՑՈՒԿ» անշարժ գույքի գրավով ընդհանուր նշանակության անհատական վարկ		
		Անշարժ գույքի գրավադրմամբ վարկային քարտեր		
3.	Շարժական գույքի ձեռքբերման կամ գրավադրմամբ վարկ	Ավտոմեքենայի գրավադրմամբ վարկային քարտեր		
4.	Ոսկու գրավադրմամբ վարկ	«ԵՐԵԲ 9» ոսկյա իրերի գրավադրմամբ սպառողական վարկեր		
		Ոսկյա իրերի գրավադրմամբ վարկային քարտեր		
5.	Առանց գրավի ապահովման սպառողական նպատակով տրամադրված վարկ, այդ թվում՝ ուսանողական, ապառիկ ֆինանսավորում, վարկային սահմանաչափ և այլն	Ընդհանուր նշանակության սպառողական վարկ		

1. Հիփոթեքային (անշարժ գույքի ձեռքբերում, վերանորոգում, կառուցապատում) վարկի տրամադրման պայմաններ

Գումար և արժույթ	Նվազագույնը.
	300,000 ՀՀ դրամ կամ 1,000 ԱՄՆ դոլար
	Առավելագույնը.
	- ձեռքբերում՝ սահմանված չէ - վերանորոգում՝ 30,000,000 ՀՀ դրամ կամ համարժեք ԱՄՆ դոլար - կառուցապատում՝ 50,000,000 ՀՀ դրամ կամ համարժեք ԱՄՆ դոլար
Ժամկետ	36 - 240 ամիս
Վարկի ու տոկոսների մարման եղանակ	- «Անուփոփոխային» (հավասարաչափ ամսական մարում) - «Չսպանակաձև» (նվազող ամսական մարում)
Տարեկան տոկոսադրույքներ	
<div>Անվանական¹</div> <div>Փաստացի²</div>	
Եթե «Կոնվերս Բանկ» ՓԲԸ կողմից տրամադրված վարկը գործում է 3 - 6 ամիս	
ՀՀ դրամ՝ (ԿԲԼՏ ³ + 5.51)%, ներկա պահին՝ 13.24%	ՀՀ դրամ՝ 14.07 - 24.00%
ԱՄՆ դոլար՝ (ԿԲԼՏ + 10.17)%, ներկա պահին՝ 10.50%	ԱՄՆ դոլար՝ 11.03 - 24.00%
Եթե «Կոնվերս Բանկ» ՓԲԸ կողմից տրամադրված վարկը գործում է 6 - 12 ամիս	
ՀՀ դրամ՝ (ԿԲԼՏ + 4.76)%, ներկա պահին՝ 12.49%	ՀՀ դրամ՝ 13.23 - 24.00%
ԱՄՆ դոլար՝ (ԿԲԼՏ + 9.42)%, ներկա պահին՝ 9.75%	ԱՄՆ դոլար՝ 10.21 - 24.00%
Եթե «Կոնվերս Բանկ» ՓԲԸ կողմից տրամադրված վարկը գործում է 12 ամիս և ավելի	
ՀՀ դրամ՝ (ԿԲԼՏ + 4.51)%, ներկա պահին՝ 12.24%	ՀՀ դրամ՝ 12.95 - 24.00%
ԱՄՆ դոլար՝ (ԿԲԼՏ + 9.17)%, ներկա պահին՝ 9.50%	ԱՄՆ դոլար՝ 9.93 - 24.00%
Վարկ/գրավ հարաբերակցություն	- Երևան քաղաքում գտնվող գույքի դեպքում՝ մինչև 80%, - Երևան քաղաքից դուրս գտնվող գույքի դեպքում՝ մինչև 70%: Հիմք է ընդունվում գրավի գնահատված իրացվելի արժեքը:

2. Անշարժ գույքի գրավադրմամբ վարկերի և վարկային քարտերի տրամադրման պայմաններ

Գումար և արժույթ	Նվազագույնը՝ 300,000 ՀՀ դրամ կամ 600 ԱՄՆ դոլար Առավելագույնը՝ 30,000,000 ՀՀ դրամ կամ համարժեք ԱՄՆ դոլար	
Ժամկետ	36 - 120 ամիս	
Վարկի ու տոկոսների մարման եղանակ	- «Անուիտետային» (հավասարաչափ ամսական մարում) - «Զսպանակաձև» (նվազող ամսական մարում)	
Տարեկան տոկոսադրույքներ		
Անվանական ¹		Փաստացի ²
Եթե «Կոնվերս Բանկ» ՓԲԸ կողմից տրամադրված վարկը գործում է 3 - 6 ամիս		
ՀՀ դրամ՝ (ԿԲԼՏ ³ + 7.01)%, ներկա պահին՝ 14.74% ԱՄՆ դոլար՝ (ԿԲԼՏ + 10.67)%, ներկա պահին՝ 11.00%		ՀՀ դրամ՝ 15.89 - 24.00% ԱՄՆ դոլար՝ 11.70 - 24%
Եթե «Կոնվերս Բանկ» ՓԲԸ կողմից տրամադրված վարկը գործում է 6 - 12 ամիս		
ՀՀ դրամ՝ (ԿԲԼՏ + 6.26)%, ներկա պահին՝ 13.99% ԱՄՆ դոլար՝ (ԿԲԼՏ + 9.92)%, ներկա պահին՝ 10.25%		ՀՀ դրամ՝ 18.04 - 24.00% ԱՄՆ դոլար՝ 10.87 - 24.00%
Եթե «Կոնվերս Բանկ» ՓԲԸ կողմից տրամադրված վարկը գործում է 12 ամիս և ավելի		
ՀՀ դրամ՝ (ԿԲԼՏ + 6.01)%, ներկա պահին՝ 13.74% ԱՄՆ դոլար՝ (ԿԲԼՏ + 9.67)%, ներկա պահին՝ 10.00%		ՀՀ դրամ՝ 14.76 - 24.00% ԱՄՆ դոլար՝ 10.60 - 24.00%
Վարկ/գրավ հարաբերակցություն	- Երևան քաղաքում գտնվող գույքի դեպքում՝ մինչև 70%, - Երևան քաղաքից դուրս գտնվող գույքի դեպքում՝ մինչև 60%՝ կիրառելով «Նեցուկ» վարկատեսակի համար սահմանված «գույքի գտնվելու գոտու վարկ/գրավ առավելագույն հարաբերակցություն» + 10% սկզբունքը ⁴ : Հիմք է ընդունվում գրավի գնահատված իրացվելի արժեքը:	

3. Ավտոմեքենայի գրավադրմամբ վարկային քարտերի տրամադրման պայմաններ

Գումար և արժույթ	Նվազագույնը՝ 300,000 ՀՀ դրամ կամ 600 ԱՄՆ դոլար Առավելագույնը՝ 25,000,000 ՀՀ դրամ կամ համարժեք ԱՄՆ դոլար	
Ժամկետ	36 - 60 ամիս	
Վարկի ու տոկոսների մարման եղանակ	<div>- «Անուիտետային» (հավասարաչափ ամսական մարում)</div> <div>- «Զսպանակաձև» (նվազող ամսական մարում)</div>	
Տարեկան տոկոսադրույքներ		
Անվանական	Փաստացի ²	
Եթե «Կոնվերս Բանկ» ՓԲԸ կողմից տրամադրված վարկը գործում է 3 - 6 ամիս		
ՀՀ դրամ՝ 14%	ՀՀ դրամ՝ 15.08 - 24.00%	
ԱՄՆ դոլար՝ 13%	ԱՄՆ դոլար՝ 13.95 - 24.00%	
Եթե «Կոնվերս Բանկ» ՓԲԸ կողմից տրամադրված վարկը գործում է 6 - 12 ամիս		
ՀՀ դրամ՝ 13.25%	ՀՀ դրամ՝ 14.24 - 24.00%	
ԱՄՆ դոլար՝ 12.25%	ԱՄՆ դոլար՝ 13.12 - 24.00%	
Եթե «Կոնվերս Բանկ» ՓԲԸ կողմից տրամադրված վարկը գործում է 12 ամիս և ավելի		
ՀՀ դրամ՝ 13%	ՀՀ դրամ՝ 13.95 - 24.00%	
ԱՄՆ դոլար՝ 12%	ԱՄՆ դոլար՝ 12.84 - 24.00%	
Վարկ/գրավ առավելագույն հարաբերակցություն	<div>- Եվրամիության մեջ մտնող երկրների, ճապոնական, ԱՄՆ, կորեական մինչև 10 տարվա արտադրության ժամկետով մեքենաների համար՝ մինչև 80%:</div> <div>- Այլ երկրների մինչև 5 տարվա արտադրության ժամկետով մեքենաների համար՝ մինչև 50%:</div> <div>Հիմք է ընդունվում գրավի գնահատված իրացվելի արժեքը:</div>	

4. Ոսկյա իրերի գրավադրմամբ վարկերի տրամադրման պայմաններ

Վարկ/գրավ առավելագույն հարաբերակցություն	Մինչև 110% ներառյալ	110.1 - 130%	130.1 - 150% ⁵
Գումար և արժույթ ⁶	Նվազագույնը՝ 50,000 ՀՀ դրամ կամ 100 ԱՄՆ դոլար Առավելագույնը՝ 5,000,000 ՀՀ դրամ կամ 10,000 ԱՄՆ դոլար	Նվազագույնը՝ 50,000 ՀՀ դրամ կամ 100 ԱՄՆ դոլար Առավելագույնը՝ 3,000,000 ՀՀ դրամ կամ 6,000 ԱՄՆ դոլար	Նվազագույնը՝ 50,000 ՀՀ դրամ կամ 100 ԱՄՆ դոլար Առավելագույնը՝ 2,000,000 ՀՀ դրամ կամ 4,000 ԱՄՆ դոլար
Ժամկետ	6 - 48 ամիս		
Վարկի ու տոկոսների մարման եղանակ	Անուիտետային (հավասարաչափ ամսական մարում)		

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ վերահսկվում է Կենտրոնական բանկի կողմից

Տարեկան տոկոսադրույքներ

Եթե «Կոնվերս Բանկ» ՓԲԸ կողմից տրամադրված վարկը գործում է 3 - 6 ամիս

Անվանական	ՀՀ դրամ՝ 13% ԱՄՆ դոլար՝ 11%	ՀՀ դրամ՝ 14% ԱՄՆ դոլար՝ 12%	ՀՀ դրամ՝ 15% ԱՄՆ դոլար՝ 13%
Փաստացի	ՀՀ դրամ՝ 13.66 - 13.82% ԱՄՆ դոլար՝ 11.45 - 11.59%	ՀՀ դրամ՝ 14.78 - 14.95% ԱՄՆ դոլար՝ 12.55 - 12.70%	ՀՀ դրամ՝ 15.91 - 16.10% ԱՄՆ դոլար՝ 13.66 - 13.82%

Եթե «Կոնվերս Բանկ» ՓԲԸ կողմից տրամադրված վարկը գործում է 6 - 12 ամիս

Անվանական	ՀՀ դրամ՝ 12.25% ԱՄՆ դոլար՝ 10.25%	ՀՀ դրամ՝ 13.25% ԱՄՆ դոլար՝ 11.25%	ՀՀ դրամ՝ 14.25% ԱՄՆ դոլար՝ 12.25%
Փաստացի	ՀՀ դրամ՝ 12.83 - 12.98% ԱՄՆ դոլար՝ 10.64 - 10.76%	ՀՀ դրամ՝ 13.94 - 14.10% ԱՄՆ դոլար՝ 11.73 - 11.86%	ՀՀ դրամ՝ 15.06 - 15.24% ԱՄՆ դոլար՝ 12.83 - 12.98%

Եթե «Կոնվերս Բանկ» ՓԲԸ կողմից տրամադրված վարկը գործում է 12 ամիս և ավելի

Անվանական	ՀՀ դրամ՝ 12% ԱՄՆ դոլար՝ 10%	ՀՀ դրամ՝ 13% ԱՄՆ դոլար՝ 11%	ՀՀ դրամ՝ 14% ԱՄՆ դոլար՝ 12%
Փաստացի	ՀՀ դրամ՝ 12.55 - 12.70% ԱՄՆ դոլար՝ 10.36 - 10.48%	ՀՀ դրամ՝ 13.66 - 13.82% ԱՄՆ դոլար՝ 11.45 - 11.59%	ՀՀ դրամ՝ 14.78 - 14.95% ԱՄՆ դոլար՝ 12.55 - 12.70%

5. Առանց գրավի ընդհանուր նշանակության սպառողական վարկի տրամադրման պայմաններ

Արժույթ և գումար	Նվազագույնը՝ 300,000 ՀՀ դրամ Առավելագույնը՝ 5,000,000 ՀՀ դրամ, ընդ որում՝ Բանկում հաշվարկային քարտ ունեցող հաճախորդների վարկավորման դեպքում տրամադրվող վարկի գումարը չի կարող գերազանցել գործող հաշվարկային քարտերի սահմանաչափերի հանրագումարի եռապատիկը
Ժամկետ	12 - 60 ամիս
Վարկի ու տոկոսների մարման եղանակ	Անուիտետային (հավասարաչափ ամսական մարում)
Տարեկան անվանական տոկոսադրույք	(«Կոնվերս Բանկ» ՓԲԸ տեղափոխվող ֆինանսավորումների միջին կշռված տոկոսադրույք - 2)%, սակայն ոչ ավելի, քան 17.5%
Տարեկան փաստացի տոկոսադրույք	Նվազագույնը՝ կախված տեղափոխվող վարկի տոկոսադրույքից Առավելագույնը՝ 19.02%
Ապահովում	Անհրաժեշտության դեպքում Բանկի կողմից կարող է պահանջվել երաշխավորություն

¹ Վարկի տրամադրման պահին գործող ԿԲԼՏ ցուցանիշների հիման վրա հաշվարկվում է աղյուսակում սահմանված տարեկան անվանական տոկոսադրույքը և ֆիքսվում առաջին 24 ամսվա համար, որից հետո տոկոսադրույքը դառնում է լողացող:

² Փաստացի տոկոսադրույքը բացի Բանկի կողմից սահմանված վճարներից, ներառում է վարկը ստանալու համար անհրաժեշտ այլ վճարները՝ տվյալ դեպքում՝ միայն միասնական տեղեկանքի:

³ ԿԲԼՏ - «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Լողացող Տոկոսադրույք: Սահմանվում է Բանկի կողմից տարեկան երկու անգամ՝ հիմք ընդունելով հիմնական ցուցանիշները, իսկ վերջիններիս անհասանելիության դեպքում՝ երկրորդային ցուցանիշները: Փոփոխման դեպքում գործող պայմանագրերի անվանական տոկոսադրույքը փոփոխվում է ոչ շուրջ, քան վարկառուին այդ մասին տեղեկացնելուց մեկ ամիս հետո:

Հիմնական ցուցանիշներ. ՀՀ դրամի դեպքում՝ ՀՀ պետական 180-օրյա զեղչափողոսային պարփապումների եկամտաբերության կորի տոկոսադրույքը, որը հրապարակվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից <https://www.cba.am> ինտերնետային կայքում; ԱՄՆ դոլարի կամ Եվրոյի դեպքում՝ համապատասխանաբար "ԱՄՆ դոլար 6-ամսյա ICE LIBOR" և "Եվրո 6-ամսյա ICE LIBOR" բենչմարկները, որոնք հրապարակվում են Intercontinental Exchange (ICE) (Ինտերկոնտինենտալ Էքսչենջ (ICE)) կազմակերպության կողմից <https://www.theice.com> ինտերնետային կայքում:

Երկրորդային ցուցանիշներ. ՀՀ դրամի դեպքում՝ ՀՀ ԿԲ կողմից սահմանվող վերաֆինանսավորման տոկոսադրույքը; ԱՄՆ դոլարի դեպքում՝ ԱՄՆ Ֆեդերալ Ռեզերվ բանկի կողմից սահմանված Federal funds-ի տոկոսադրույքը կամ միջակայքի վերին շերտը; Եվրոյի դեպքում՝ Եվրոպական կենտրոնական բանկի Marginal lending facility-ի տոկոսադրույքը:

Ընդ որում՝ հիմնական ցուցանիշների հասանելիության անհնարինության և երկրորդային ցուցանիշների կիրառման դեպքում երկրորդային ցուցանիշների հիման վրա սահմանված ԿԲԼՏ-ներով ֆինանսավորումների անվանական տոկոսադրույքները սահմանվում են այնպես, որ ֆինանսավորման տոկոսադրույքի հաստատման բաղադրիչի փոփոխության պայմաններում անվանական տոկոսադրույքի մեծությունը մնա անփոփոխ:

Սահմանված ԿԲԼՏ տոկոսադրույքները հրապարակվում են Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում <https://conversebank.am/hy/kbht/> հասցեով և հասանելի են Բանկի տարածքում:

Այս վարկի լողացող տոկոսադրույքը Բանկի կողմից կարող է փոփոխվել ոչ ավելի հաճախ, քան տարին երկու անգամ: Լողացող տոկոսադրույքի բարձրացման և իջեցման առավելագույն շերտ սահմանվում է +/- 4 տոկոսային կետ: ԿԲԼՏ-ների մեծությունը կարող է կլորացվել մինչև մեկ հարյուրերորդական:

Ամփոփագրի թարմացման ամսաթվի դրությամբ՝ 24.08.2021թ., գործող ԿԲԼՏ մեծություններ. ՀՀ դրամ՝ 7.73%, ԱՄՆ դոլար՝ 0.33%:

⁴ «Նեցուկ» վարկատեսակի համար սահմանված «Գուրի 1, Գուրի 2 և Գուրի 3-ում ընդգրկված համայնքներում անշարժ գույք գրավադրելիս վարկ/գրավ հարաբերակցությունը +10 տոկոսային կետով ավելի դիտարկելիս վարկի անվանական տոկոսադրույքը սահմանվում է (գործող տոկոսադրույք +1)» դրույթը չի տարածվում Ալցիայի վրա:

⁵ Սույն պայմանը կիրառելի է միայն հիփոթեքային, անշարժ ու շարժական գույքի գրավով ապահովված վարկ ունեցող հաճախորդների համար:

⁶ Ոսկու գրավադրմամբ 110%-ը գերազանցող վարկ/գրավ հարաբերակցությամբ տրամադրվող ֆինանսավորումների դեպքում ֆինանսավորման առավելագույն գումարի հաշվարկում ներառվում է սույն Ակցիայի շրջանակներում տրամադրված բոլոր ոսկու գրավադրմամբ վարկերի հանրագումարը:

Ընդհանուր դրույթներ

- Վարկերը տրամադրվում են առանց եկամտի վերլուծության՝ PTI և OTI ցուցանիշներ չեն հաշվարկվում:
- Անշարժ գույքի գրավադրմամբ վարկ ստացող բոլոր վարկառուների հետ կնքվում է Հիմնական վարկային պայմանագիր՝ 240 ամիս ժամկետով:

Սահմանափակումներ	<p>Ակցիայի պայմանները չեն տարածվում՝</p> <ul style="list-style-type: none"> - համապատասխան լիազոր մարմինների կողմից տրված տեղեկանքների հիման վրա վիրավոր գինձառայող համարվող հաճախորդների վրա, - ԱՀ գրանցում ունեցող և «Կոնվերս Բանկ» ՓԲԸ «Ստեփանակերտ» մասնաճյուղի հաճախորդների վրա, - Բանկի համապատասխան որոշման շրջանակներում վարկային պարտավորությունների կատարման տարաժամկետումից օգտված հաճախորդների վրա:
Վարկային պատմության պահանջներ	<ul style="list-style-type: none"> - Վարկի համար դիմելու պահին հայտատուն չպետք է ունենա ժամկետանց վարկային պարտավորություններ (ներառյալ երաշխավորությունները), ինչպես նաև «ստանդարտ»-ից խիստ դատվող դասակարգված գործող երաշխավորություններ: - Վարկի համար դիմելու օրվան նախորդող մեկ տարվա ընթացքում հայտատուի որևէ վարկի գծով չպետք է առկա լինի «ստանդարտ»-ից խիստ դատվող դասակարգում:

Այլ պայմաններ՝ համաձայն Բանկի համապատասխան ծառայության դրույթների:

Հաճախորդի կողմից կատարվող վճարների ցանկ

Վարկային հայտի ուսումնասիրության վճար	0
Վարկի տրամադրման վճար	0
Վարկային հաշվի սպասարկման վճար	Հիփոթեքային, անշարժ ու շարժական գույքի գրավով ապահովված վարկերի դեպքում՝ ամսական 2,000 ՀՀ դրամ Ոսկու գրավով ապահովված և առանց գրավի վարկերի դեպքում՝ 0
Միասնական տեղեկանք	Անշարժ գույքի դեպքում՝ 10,000 ՀՀ դրամ Շարժական գույքի դեպքում՝ 0

Ակցիայի շրջանակներում տրամադրվող վարկերի ապահովման միջոց հանդիսացող գրավների գնահատման և գրավադրման հետ կապված ծախսերը, այդ թվում՝ գործարքի նոտարական վավերացման և պետական գրանցման, իրականացվում են Բանկի կողմից, այդ պատճառով չեն ներառվում փաստացի տոկոսադրույքի հաշվարկում:

Վարկի տոկոսագումարը հաշվարկվում է անվանական տոկոսադրույքի հիման վրա, որը կիրառվում է նվազող մնացորդի նկատմամբ, իսկ տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը Ձեզ համար տոկոսագումարները և վարկի տրամադրման ու սպասարկման գծով բոլոր պարտադիր վճարները սահմանված ժամկետներում և չափերով կատարելու դեպքում:

Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կարգը կարող եք գտնել հետևյալ [հասցեում](#):

Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ

1	Վարկային հայտ
2	Անձը հաստատող փաստաթուղթ, Հանրային ծառայությունների համարանիշ կամ տեղեկանք ՀԾՀ չստանալու վերաբերյալ (չի պահանջվում, եթե ներկայացվում է նույնականացման քարտ)
3	Անշարժ գույքի և ավտոմեքենայի գրավադրմամբ ֆինանսավորումների հայտերի դիտարկման դեպքում
3.1	Գրավի նախնական գնահատման եզրակացություն/ակտ
3.2	Բնակության վայրի մասին տեղեկանք՝ համատեղ բնակվող ընտանիքի անդամների նշումով
3.3	Վարկառուի և գրավատուների (եթե տարբեր են) ամուսնության վկայական/ներ/ը (առկայության դեպքում)
4.	Անշարժ գույքի գրավադրմամբ ֆինանսավորումների դեպքում՝ ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված անշարժ գույքի միավորի վերաբերյալ միասնական տեղեկանք՝ գրավադրվող գույքի սահմանափակումների վերաբերյալ (վարկի հաստատումից հետո)
5.	Ավտոմեքենայի գրավադրմամբ ֆինանսավորումների դեպքում
5.1	Ավտոմեքենայի տեխնիկական անձնագիր (վարկի հաստատումից հետո), որը վերադարձվում է վարկառուին՝ տրանսպորտային միջոցի գրավի պետական գրանցման վկայականը Բանկին հանձնելուց հետո

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ վերահսկվում է Կենտրոնական բանկի կողմից

5.2 Ավտոմեքենայի սեփականության իրավունքի վկայական (վարկի հաստատումից հետո)

5.3 Տրանսպորտային միջոցի օտարման նկատմամբ սահմանափակումների վերաբերյալ տեղեկանք (վարկի հաստատումից հետո)

Անհրաժեշտության դեպքում կարող են պահանջվել նաև այլ փաստաթղթեր

Ուշադրություն

Արտարժույթի փոխարժեքի փոփոխությամբ պայմանավորված կարող է փոխվել փարեկան փաստացի տրոխսադրույքը և վարկի մարումների մեծությունը:

Հաշվարկներում հիմք են ընդունվել 24.08.2021թ. Կենտրոնական բանկի կողմից հայտարարված՝ արժույթային շուկայում ձևավորված միջին փոխարժեքները՝ USD - 490.56:

Բանկը, «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պաշտպանության ուսումնասիրության նպատակով կարող է հաճախորդից՝ «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր փախ հաճախորդին:

Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ կառավարության հետ կնքված համաձայնագրի պայմաններին համապատասխան, Ձեր՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար, Բանկը կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում:

Եթե հայցվող վարկային միջոցները փրամադրվելու են նաև կամ բացառապես Ձեր՝ այլ կազմակերպություններում (բանկեր, վարկային կազմակերպություններ և այլն) գտնվող վարկային պարտավորությունների վերաֆինանսավորման նպատակով, ապա սույնով զգուշացնում ենք, որ Դուք պարտավոր եք մարել վերաֆինանսավորումից հետո այդ կազմակերպություններում չմարված տրոխսագումարները, տուժանքը, սպասարկման և այլ վճարները ինքնուրույն, որոնց չկատարման դեպքում Բանկը պատասխանատվություն չի կրում:

Ծառայությունների տրամադրման վայր

Վարկը տրամադրվում է Բանկի Գլխավոր գրասենյակում և մասնաճյուղերում՝ բացառությամբ «Ստեփանակերտ» մասնաճյուղի:

Բանկի հետ հաղորդակցման եղանակ

Դուք իրավունք ունեք հաղորդակցվել «Կոնվերս Բանկ» ՓԲԸ հետ Ձեր նախընտրած եղանակով՝ փոստային կապի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումն ամենահարմարավետն է՝ հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկից և ապահովում է գաղտնիություն:

Ձեր ֆինանսական տեղեկատվություն

«Ձեր ֆինանսական տեղեկատվություն» ֆիզիկական անձանց առաջարկվող ծառայությունների որոնման, համեմատման և Ձեզ համար ամենաարդյունավետ փարբերակի ընտրությունը հեշտացնող էլեկտրոնային համակարգ է՝

<https://www.fininfo.am/compare-loan-refinancing>.

<https://www.fininfo.am/compare-mortgage-loan>.

<https://www.fininfo.am/compare-car-loans>.

<https://www.fininfo.am/compare-gold-loan>.

<https://www.fininfo.am/compare-consumer-loan>:

Վեճերի և տարաձայնությունների լուծման կարգ

Հաճախորդի և Բանկի միջև ծագած ցանկացած վեճ և տարաձայնություն նախ և առաջ լուծվում է երկուստեք՝ փոխադարձ բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ինչպես դատական կարգով, այնպես էլ Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:

Ծանուցում Ֆինանսական համակարգի հաշտարարի վերաբերյալ

Տեղեկացնում ենք, որ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ կողմից Ձեզ մատուցվող ծառայությունների հետ կապված տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջի դեպքում ծագած վեճերն ու տարաձայնությունները կարող են լուծվել Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:

Բանկի և Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի միջև կնքված համաձայնագրի համաձայն՝ Բանկը հրաժարվում է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից միայն այն գույքային պահանջների մասով, որոնց չափը չի գերազանցում 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, իսկ գործարքի գումարի չափը չի գերազանցում 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

Հասցե՝ 0010 ք. Երևան, Մ. Խորենացու փող. 15,

«Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն 7-րդ հարկ

Էլ. փոստ՝ info@fsm.am

Հեռախոս՝ (+37460) 70-11-11

Ֆաքս՝ (+37410) 58-24-21

Կապ Բանկի հետ

Հավելյալ տեղեկատվության համար կարող եք՝

- այցելել Բանկի <https://www.conversebank.am> ինտերնետային կայք
- այցելել Բանկի Գլխավոր գրասենյակի Հաճախորդների սպասարկման գրասենյակ կամ ցանկացած մասնաճյուղ
- զանգահարել (+374 10) 511 211 հեռախոսահամարով
Viber՝ +374 95 511 211
Skype՝ conversebank-callcenter